

Թուրքերուն պարտութեամբ վերջացաւ, ծայր տալով հետզհետէ Օսմանեան կոչումը կայսրութեան անհաստատ եւ աւագակարարոյ կառուցուածքին փլուզումին:

Երեմիա Քէօմիւրճեան կուտայ նաեւ հիշքէի 1104 թուականը, որ կը սկսի 1692 Սեպտեմբեր 12ին:

է) Էջ 259ա. Երկրորդ յիշատակարան, զրչէն. «Աղօթք ս(ր)բ(ո)յ հօրն յոհան դառնեցուն ասացեալ է»: Կը սկսի կարմրաւ, երեք տող «Աղաչեմք զձեզ. տ(է)ր Ա(ստուա)ծ...». Կ'աւարտի էջ 259բ, որուն ներքեւ նոյն զրչէն ութը տող՝ կայ զրութիւնս. «Ամենապ(այօծառ. դերափայլ սրբ(ա)զան եւ Երջանիկ ա(ստուա)ծարեալ Հայրապետ սրբ(ո)յ դահին Սըսայ աթոռոյ սրբասնեալ արիական հոփի տ(եա)ռն Եղեալ(ա)ր Կաթող(իկ)ոսի ս(ր)բ(ո)յ մատա(մ)բ զրաց զայս աղօթքս մեր խնդր(ո)յ յամի տ(եա)ռն 1771 սեպտ(եմ)բեր 16»:

Եղիազար Կաթողիկոս մը Սսոյ աթոռին վրայ առ հասարակ չի յիշուի: Պատմաճեան Գրիգոր Պատրիարքի Յիշատակարանին մէջ կը յիշուի որ «1772 թուականին՝ Եփրեմ (Ա. Աջապահեան) կաթողիկոս եղաւ Սսոյ Աթոռին. եւ այս միջոցին Աջապահեան Եղիազար Եպիսկոպոս՝ իւրովի կաթողիկոս եղաւ յանկեան ուրեք եւ Սասմալով եկաւ իր կաթողիկոսութիւնը հաստատել տալու համար, երբ արդէն կաթողիկոս եղած էր Եփրեմ»:

Իրականութիւնը սա է որ Եփրեմի Կաթողիկոս ընտրուելու եւ օծուելու թուականը որոշ չէ, եւ ոչ մէկ տեղ կը հանդիպինք կարեւոր թուականին եւ գործողութեան մանրամասնութեան: Օրմանեան առանց ապացոյցի 1771 նշանակած է: Սակայն Պատմաճեան Գրիգոր Պատրիարք,

ինչպէս տեսանք, 1772ին կը նշանակէ զայն կաթողիկոս: Արդ մեր յիշատակարանը, որ վերը տուինք, Եղիազարը Կաթողիկոս Սսոյ կը նկատէ արդէն 1771 Սեպտեմբեր 16ին: Անմեկնելի է թէ ինչպէս կարելի է Կաթողիկոս ընտրուիլ եւ օծուիլ «յանկեան ուրեք»: Անյայտ է թէ ինչպէս վերջացաւ Եղիազարի կաթողիկոսութիւնը, կամ ե՛րբ մեռաւ ան: Կ'երեւի թէ Եղիազարի եւ Եփրեմի կուսակցութեանց միջեւ բուռն պայքար մղուեցաւ, որուն համար Գրիգոր Պատմաճեան Պատրիարքը կը զրէ որ «Այս պատճառաւ շատ նեղութիւն եղաւ թէ ժողովուրդին եւ թէ մեղի» (էջ 22):

Վերեւ մեր առած յիշատակարանը որոշ կերպով Կաթողիկոս կը ներկայացնէ Եղիազարը, առանց որեւէ կասկած տալու անոր կաթողիկոսութեան մասին: Ընթերցողը կը ստանայ այն տպաւորութիւնը՝ որ Եղիազարի կաթողիկոսութիւնը պայքարի խնդիր չէ: Պատմաճեան, սակայն, կը պնդէ որ «Եփրեմն էր օրինաւոր կաթողիկոս»:

Յաւելուածական վկայութեանց եւ պրպտութեան կարիք կայ՝ լուսարանելու համար այս մութ պարագան: Վերջովմունք տեղի ունեցեր է Եղիազարի ընտրութեան պատճառաւ, եւ Սսոյ թեմին ժողովուրդը Պօղոսեան եւ Ապօղոսեան կուսակցական հատուածումներով իրարու դէմ ելած են:

Գրչագիրը գնեցի, հաւաքածոյիս համար, ի Կ. Պոլիս, հանդուցեալ Տիար Երուանդ Այեանաքէ, որ թղթատարով ինծի ուղարկեց:

(Շար. 1)

Յ. ՔԻՒՐՏԵԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԹՈՒԱԿԱՆԻ ՄԱՍԻՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ

(Իենիկ Եսայու Թումանեանի «Առնեմ տումարացոյց»ի մասին)

«Առնեմ տումարացոյց»ը¹ փոքրիկ հատոր մըն է, 66 էջերով, ուր Թումանեան պարզ ոճով կը բացատրէ հռոմէական, հայկական Մեծ ու Փոքր, Աղարիայի եւ Հիւրայի թուականները. կուտայ անոնց զուգընթացութեան ցանկերը՝ մեր քրիստոնէական թուականին հետ. կան աղիւսակներ՝ իւրաքանչիւր թուականի համար, որպէսզի ուսումնասէրները կարենան ճշտել որեւէ տուեալ տարիի ամսանախարհագրական տեղանքը շարժումն թիւերուն համապատասխանող շարժումն օրերը. զիրքին վերջին էջերն ալ յատկացուցած է լուսնի ծնունդը եւ աւագ լրումը զանելու կանոններուն:

Գրքին առաջին մասն է, որ մեզ առաւելագոյն կը հետաքրքրէ, որովհետեւ հայկական բանասիրութեամբ զբաղողնեւ, Թումանեանին այս ձեռնարկին մէջ կը ըրէ, թուականները ամենամտերիմ բարեկամը, զանեւ իրենց ամենամտերիմ բարեկամը, որուն ստէպ պիտի դիմեն «պատմադրական բաղձաթիւ հարցերի լուսարանման ժամանակ», որպէսզի կարենան «վերլուծել զանազան տուեալներ, ճշտել զրանց ժամանակը, իմանալ շարժումն օրը...»:

Այս նպատակին հասնելու համար, Թումանեան պատրաստած է Ա) Աղիւսակ մը՝ զանելու համար հռոմէական կամ քրիստոնէական միջադարձին թուականի ամսաթիւերուն համապատասխանող շարժումն (կիրակի, երկուշաբթի, երեքշաբթի...) օրերը (էջ 11-12): Բ) Հայկական եւ հռոմէական թուականներու զուգընթացութիւններու ցանկը (էջ 15-30), որ կը սկսի հայկական Ա. տարւան Նաոր կը զիմաց զնելով քրիստոնէական 1-ի զիմաց զնելով քրիստոնէական 11-07-552 թուականը, եւ կը վեր-

ջանայ հայկական ՌՆԾ = 1450 տարիով, որու զիմաց կը զտնենք հին տոմարի 14-07-2000ը եւ նոր տոմարի 27-07-2000 տարին: Գ) Աղիւսակ՝ հայկական Մեծ թուականի շարժումն օրերը զանելու (էջ 33-34): Դ) Աղիւսակ՝ հայկական Փոքր թուականի օրերը զանելու (էջ 36-37): 5) Աղիւսակ՝ Աղարիա Զուգայեցիի տոմարի շարժումն օրերուն համար (էջ 38-39):

Թումանեանի այս աշխատասիրութիւնը պտուղն է, հայկական թուականի նկատմամբ մեր ունեցած աւանդական ծանօթութիւններուն, որոնց ինք յստակ դիժեր տուած է, եւ զանոնք ամփոփած է զանազան ցանկերու եւ աղիւսակներու մէջ: Այս զան ցանկերու եւ աղիւսակներու մէջ: Այս զան ցանկերուն ներդրումութեան զիմելով, պիտի ուզէինք տոմարագէտներու ուշադրութիւնը հրաւիրել քանի մը կէտերու շուրջ:

Ա.

ՀԱՅԿԱԿԱՆ

ՄԵԾ ՈՒ ՓՈՔՐ ԹՈՒԱԿԱՆԻ ԿԱՆՈՆՆԵՐԸ ԵՒ ԹՈՒՄԱՆԵԱՆԻ ԱՂԻՒՍԱԿՆԵՐԸ

Պրօֆ. Ա. Արքայապետ, «Շիրակացու մատենագրութիւնը»² գործին մէջ հրատարակած է հայոց Մեծ թուականի 532 տարիներուն կանոնները, իսկ «Յուլիանէս իմաստասէրի մատենագրութիւնը»

1. ՀՍՍՌ ԳԱՀ Զրտ. երեւան, 1965, էջ 66:

2. Հրտ. երեւան, 1944, էջ 263-282:

նր»³ զբերին մէջ՝ Փոքր թուականի 532 տարիները:

Այս հրատարակութիւններով կ'ունենանք 1064 շարունակեալ տարիներու պաշտօնական օրացոյցի կանոնները, ուր նշանակուած են իւրաքանչիւր տարուան մեծ տօներուն ամսաթիւը, շաբթուան օրը, լուսնի ծննդեան ու լրման և կիրակիներուն թուականները: Մեծ թուականի 532 տարուան կանոնները պատրաստուած են երկու երեսով, որոնց մէկը հայկական

ամսանուններով օրացոյց է և և միւսը յուլեան ամսանուններով, միեւնոյն հայկական տարիին համար: Մինչ Փոքր թուականի կանոնները պատրաստուած են միմիայն Յուլեան ամսանուններով:

Լաւ պիտի ըլլար եթէ թուամեկանի պատրաստած աղիւսակները լրիւ համապատասխանէին այդ հրատարակութիւններուն:

Օրինակ առնենք հայկական ՇԼ = 530 տարին:

Անանիա Շիրակացիի		Աղիւսակ թուամեկանի ⁶
Յուլեան օրացոյցին կանոնն է ⁴	Հայկական օրացոյցին կանոնն է ⁵	Համամ տառ՝ Զ
Յայտնուիրն. 6 Յունր., հինգշ.: Բարեկեցեալն. 6 Մարտ, կիրակի: Լրումն լուսնի. 17 Ապրիլ, կիրակի: Զատիկ. 24 Ապրիլ, կիրակի:	Մարգաց ժր: Եշ: Հոռի ժր: Կիր: Նաւասարդ զ: Կիր: Հոռի ին: Կիր:	Յայտնուիրն. Մարգաց ժր. հինգշ.: Բարեկեցեալն. Նաւասարդ զ, շաբաթ: Լրումն լուսնի. Հոռի ժր, շաբաթ: Զատիկ, Հոռի ին, շաբաթ:

Կը տեսնենք որ ՇԼ տարուան բարեկեցեալն, Լրումն լուսնի և Զատիկի օրերը, հայկական օրացոյցի մէջ կիրակիներ են, մինչ թուամեկանի աղիւսակին մէջ՝ յաւաքով: Այս տարբերութեան պատճառը պէտք է փնտռել հայկական տարիի կադմին մէջ: Թուամեկան հայկական տարին հայ ամսանուններու միութեան մէջ կ'ըմբռնէ. իր տարին Նաւասարդով կը սկսի և Աւելեաց հինգով կը վերջանայ: Իսկ Շիրակացիի բնագրին մէջ հայկական տարիին միութիւնը Յուլեան ամիսներու ամբողջութեան մէջն է և ոչ թէ հայկականին: Շիրակացիի ՇԼ տարին կը սկսի Մարգաց 7-ով և կը վերջանայ, բոլոր ամիսներու շրջանը ընելէ ետք, Մարգաց 6-ով: Շիրակացիի համաձայն մտածելով՝ թուամեկանի ամիսներուն Մարգաց 7-էն մինչեւ Աւելեաց 5, ՇԼ տարիին կը պատկանին. իսկ Նաւասարդ մէկէն մինչեւ Մարգաց 6-ը՝ ՇԼ տարիին: Այնպէս որ բարեկեցեալն Նաւասարդ զ-ն եթէ թու-

մանեանի ՇԼ տարիին մէջ փնտռենք՝ կիրակիի կը հանդիպինք: Նոյնն է պարագան Հոռի ժր-ի և ին-ի, որոնք կիրակիներ են թուամեկանի ՇԼ-ին մէջ⁵: Այս դրութեամբ վերոյիշեալ անհամաձայնութիւնները կը ջնջուին, բայց թուամեկանի աղիւսակին դործածութիւնը անկարելի ըլլալու չափ կը դժուարանայ:

Բ.

ՀԱՅԿԱԿԱՆ ՆԻ ՀՈՌԱՄԵԿԱՆ
ԹՈՒԱԿԱՆՆԵՐՈՒ
ԶՈՒԳԸՆԹԱՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Հայոց Մեծ և Փոքր թուականներու շրջանին, հոռմէականին հետ զուգընթացութեան հարց դոյութիւն չունէր. կար միայն Յուլեան և հայկական ամիսներով

3. Հրա. Երևան, 1956, էջ 191-200:

4. Շիրակացու մատենագրութիւնը, էջ 281, 282:

5. Նոյն, տեղ:

6. Առնեմ տում. էջ 34:

պատրաստուած օրացոյցներու զուգընթացութիւն՝ հայկական թուականի ծիրին մէջ:

Մեր դարուն, հայկական թուականի դործածութիւնը դադարած է, տեղի տալով հոռմէականին, այսինքն՝ քրիստոնէականին. ասկէ կը բխի ստիպողական կարիք մը քրիստոնէականի վերածելու Հայոց պաշտօնութեան բոլոր թուականները, որպէսզի անոնք մեզի ըմբռնելի դառնան և տեղ ու կարգ գտնեն մարդկային պատմութեան տիեզերական դիրքի վրայ: Ասով մեր առջեւ կը բացուի երկու թուականներու՝ հայկականին և քրիստոնէականի զուգընթացութեան հարցը: Մեր յաջորդ տողերուն նպատակն է վերակենդանացնել Հայոց թուականի հիմնադրիւններուն տոմարագրական տեսութիւնները և մատնանշել զուգընթացութեան հարցը լուծելու լուսաւոր ուղին:

Ներկայիս, հայկական թուականի դործածութիւնը իր յիշատակ մնացած է քանի մը օրացոյցներու և պաշտօնութեան մէջ թուականի դիմաց՝ ոմանք երկու հայկական տարի կը գնեն. օրինակ՝ 1965 թուականին Քրիստոսի և թուին Հայոց Ռեթ-Ռեթ-Ռեթ: Ուրիշներ, ինչպէս «Էջմիածին» ամսաթերթը և նաեւ կաթողիկոսական կոնդակները, քրիստոնէական մէկ թուականի դիմաց՝ կը գնեն մէկ թուական Հայոց. օրինակ՝ 1956 փրկչական ամի և ի տուժարիս Հայոց Ռեթ: Թուամեկան չ'ընդունիր ոչ մէկ և ոչ միւս դործածութիւնը, և կը նախընտրէ միանալ տոմարագէտներու ուրիշ խմբակի մը, որոնք հայկական մէկ թուականի դիմաց կը գնեն երկու քրիստոնէական տարի: Օրինակ, թուամեկանի համաձայն՝ Հայոց Ա. տարին կը սկսի քրիստոնէական թուականի 552 Յուլիս 11ին, և կը վերջանայ 553ի Յուլիսի 10ին⁷:

Երեւոյթին նայելով՝ թուամեկան կըրնայ հարցնել թէ ինչ արժէք կը ներկայացնէ հայկական կամ քրիստոնէական թուականի առաջնութիւն տալը. թուականները առաջ կամ վերջը գնելը, եթէ

միայն արժանապատուութեան խնդիր ըլլար, բոլոր հայերս համաձայն պիտի ըլլայինք հայկականին առաջնութիւն տալու մէջ. սակայն թուականը իր տոմարագրական միութիւն, ունի իր մէջ հաշուական խորք, որ չէ վերադառնալիքներու աչքէն ու մտքէն: Երբ հայկական ամիսներով կազմուած թուականի առաջնութիւն տանք, տարուան օրերուն զուժարը միշտ 365 կ'ըլլայ, նոյնիսկ նահանջ տարիներուն. ընդհանրապէս երբ Յուլեան ամսաթիւերով կազմուած թուականին տրուի առաջնութիւնը, պարզ տարին 365, իսկ նահանջը՝ 366 օր կ'ունենայ, և իր դիմացը գտնուող հայ ամսաթիւերուն նահանջի պակասը կը սըրբազրուի:

Թուամեկանի գույց այն կարծիքէն է որ հայկական Մեծ ու Փոքր թուականները, ընդամենը 1064 տարի, նահանջ չեն ունեցած: Կը խորհինք թէ նման կարծիք ունեցող տոմարագէտները մեծապէս կը սըրխային: Համոզուելու համար, որ հայկականը նահանջ ունէր, կը բաւէ առնել Շիրակացիի կանոններէն նահանջ տարի մը և հաշուել օրերը. եթէ դուժարը 366 մը և հաշուել օրերը. եթէ դուժարը 366 տայ, ըսել է այդ տարին իրապէս նահանջ էր: Առնենք Հայոց Դ տարին. հայ ամսանուններու կանոնին համաձայն տարուան օրն է Արաց 25ը, քանի որ Յայտնութիւնը, տարուան վեցերորդ օրը՝ Արաց 30 է⁸: Դ տարուան վերջին օրն ալ՝ յաջորդ Արաց 25ն է, քանի որ Ե տարին կը սկսի Արաց 26ով, և իրր Յայտնութեան օր՝ ունի Մեհեկանի 1ը: Արդ, հաշուենք օրերը. տարեկիրքին՝ Արացէն ունինք 6 օր + (Մեհեկանէն - Հրոտից 30×6) = 180 օր + Աւելեաց 5 օր + (Նաւասարդ - Քաղոց 30×5) = 150 օր + ամսվերջի Արացէն 25 օր. զուժարն է 366 օր. հետեւանք պարզ է. Հայոց Մեծ թուականի Դ տարին եղած է իրապէս նահանջ:

Թէեւ փաստարկութիւնը որեւէ տարակոյս չի վերցնէր, բայց մենք շարունա-

7. Անդ, էջ 15:

8. Շիրակացու մատենագրութիւնը, էջ 263:

կենք յաւելեալ ծանօթութիւններ տալ, հետեւեալ երեք վերնադիրներու տակ:

1. - Յուլեան ամիսներուն դերը հայկական քուակամին մէջ:

ՇԼԲ առաջին բոլորակը, այսինքն 532 տարիներու շրջանակը, որուն Ա. տարիով կը սկսի նաեւ Հայոց թուականը, իր պարունակութեամբ քրիստոնէական օրացոյց է, պատրաստուած 532 տարիներու համար. որոնց վերջաւորութեան կարելի էր ծայրէն սկսիլ յուլեան բաժինը, այնպէս որ 533րդ տարուան օրացոյցը կը նոյնապար Հայոց յուլեան տոմարի ՇԼԲ բոլորակի Ա տարուան օրացոյցին հետ: Վեցերորդ դարու՝ քրիստոնէական թուականի 562ի մեծագոյն տոմարական գլխուն էր ասիկա: Հայերը բոլորակին տոմարագիտական սկզբունքները իւրացնելէ ետք, պատրաստեցին նաեւ նախընթաց ինը տարիներու ցանկերն ալ եւ ՇԼԲ ա տարին նոյնացուցին Հայոց թուականի սկզբնաւորութեան հետ (553):

Հայոց թուականի հիմնադիրներուն մըտահոգութիւնը եւ գլխաւոր նպատակը եղած էր գտնել եւ կանոնել Զատիկի ճիշտ ամսաթիւը, որ կապուած էր եղանակի՝ դարնան գիշերահաւասարէն ետք՝ առաջին աւագ լուսնի յաջորդող կիրակիին: Եկեղեցական կանոնները սահմանած էին նաեւ դարնան գիշերահաւասարի ամսաթիւը՝ Մարտ 21ին⁹, եւ նահանջի օրը փետրուարի վերջաւորութեան. հոսսկ Յայտնութիւնը պէտք էին տօնել անշարժօրէն Յունուար 6ին: Կապանքներ, ամէնքն ալ, զորս կարելի էր հաշտեցնել հայկական շարժուն ամիսներուն հետ: Ուստի հայ տոմարագէտները ստիպուած էին հայկական թուականի ծիրին մէջ առնել Յուլեան ամսանունները՝ իրենց ամբողջական կազմով:

Օրացոյց պատրաստելու արուեստին մէջ, Յուլեանին անկախ ըլլալու փափաքը միշտ ունեցած են հայերը: Յովհաննէս կաթողիկոս կը գրէ. «Անաստաս կաթողիկոս հոգ ունէր մեր հայկական տոմարին վրայ, եւ կը մտածէր թէ զուցէ

կրնայ անշարժ պահել զայն, ուրիշ ազդերու նման, որպէսզի միշտ նոյն թուականին զայն տարուան տօները: Ուստի կը կանչէ Անանիա Անեցին, որ իմաստուն եւ հմուտ էր այն արուեստին մէջ, կը յայտնէ անոր իր սրտին փափաքը եւ կը հրամայէ որ հնարք մը գտնէ զայն իրանդործելու: Անանիա կ'աշխատի, կը պատրաստէ հայկական տոմարին հաստատուն կարգը, նման բոլոր ազգերու տոմարին, այնպէս որ երբ մերինը բազմատէինք լաւագոյններու հետ, այլեւս պէտք պիտի չունենայինք հոռմէականին միանալու: Եւ մինչ Անաստաս կը խորհէր եւ պիտիպոսէր ժողովքով հաստատել եղածը, կը վախճանի, վեց տարի կաթողիկոսական աթոռը կենալէ ետք: Յաջորդները կ'անտեսեն այս հարցով զբաղել եւ մեր թուականը կը շարունակէ իր միշտ յառաջացող ընթացքը»¹⁰:

Վերեւ ըստածներէն յայտնի է որ Յուլեան տոմարը կը ծագայէր իբրեւ նեցուկ, բնական հայկականին, սրբազրելու համար շարժուն տոմարին անպատեհութիւնները: Հայոց եկեղեցական տարին եւ տօներու կարգը միշտ կը սկսէր Յիսուսի ծնունդով եւ Յայտնութեամբ՝ Յունուար 6ին: Անանիա Շիրակացիի խօսքերը այս մասին շատ յայտնի են «Մեր զբաղումներուն պատճառած մեծ յոգնութիւնը, Աստուծոյ սուրբ տօներուն համար էր, որուն հասանք եւ արժանի եղանք անոր մասին ճանաչելու. եւ նախ մեր Քրիստոսի Աստուծոյ Ծնունդի տօնին համար, որ սկիզբն է մեր տարեկան տօներուն եւ առաջինը (ծիսական) կարգերուն եւ Քրիստոսի

9. Նիկիոյ տիեզերական ժողովը (325 թ. Ք.) դարնան գիշերահաւասարի իբր ամսաթիւ կ'որոշէ Մարտ 21ը: Հայոց տոմարին հիմնադիրները գիշերահաւասարի ամսաթիւ կ'իջեցնեն Մարտ 20ին. արդեօք գիշերահաւասարի սրբազրութիւն մըն է եղածը, քանի որ 130 տարուան մէջ գիշերահաւասարը մէկ օր կը կանխէ, եւ Նիկիոյ ժողովի որոշումէն մինչեւ հայոց թուականի սկզբնաւորութիւնը արդէն 228 տարի անցած էր:

10. Պատմութիւն Յովհաննու կաթողիկոսի, Երասագէտ, Բ. տպ., 1867, էջ 117-118:

ս.ս.ս. բոլոր յիշատակներուն»... «Առաջեալները որոշեցին եւ հաստատեցին որ մեր Տիրոջ եւ Փրկիչին Ծննդեան եւ Յայտնութեան տօնը ըլլայ գլխաւոր եւ առաջնորդը եկեղեցւոյ տօներուն... որ Յունուարի վեցն է՝ հոռմայեցիներու համաձայն»: Նոյն ճառին վերջաւորութեան, ութ ազգերու Յայտնութեան հաստատուն ամսաթիւերը տալէ ետք՝ կ'ըսէ. «Իննբորոգ Յայտնութիւնը, Հայոց համաձայն՝ փոփոխումով է, չորս չորս տարին մէկ մը. եւ թէ ինչպէս կարելի է (անոր ամսաթիւը) գիտնալ, եւ կամ թէ ինչո՞ւ կայուն է միւս ազգերուն նման, տոմարի կարգին, իր տեղին պիտի բացատրեմ»¹¹: Այս բացատրութեան բնագիրը դեռ չէ գտնուած. «Տիեզերագիտութիւն եւ տոմար» գրքի նահանջի գլուխին վերջաւորութեան՝ փոքր յիշատակութիւն մը կայ, որ կ'ըսէ. «նահանջը «տեսնելն է թէ քանի՞ն կու գան Յայտնութիւնը եւ գիշերահաւասարը, եւ ասով՝ փոխադրուող օրերը»¹²:

Նահանջի մէջն էր հայ ամսաթիւերուն զուգընթացութեան օրէնքը, որով հայ ամսաթիւերը, նահանջներէ ետք՝ մէկ թիւով եւ յարաճուն կարգով՝ կ'անցնէին Յուլեան տոմարի Յունուար 6ի եւ Մարտ 20ի վրայէն: Հայոց Ա. տարուան Յունուար 6ի գիւմարն էր Արաց 30ը, առաջին նահանջ՝ Դ. տարին էր, հինգերորդ տարին Յունուար 6ի գիւմար ունէր Մահեկան 1ը, եւ այսպէս յաջորդաբար ամէն նահանջէ ետք:

Այս օրէնքն է նաեւ պատճառը՝ որով Յուլեան տոմարը անբաժան լրացուցիչն է Հայոց տոմարին. Յունուար 6ը առանցք եւ իսկոն է հայ ամսաթիւերուն, որոնք չորս տարուան պարբերականութեամբ, յարատեւօրէն կը դառնան Յունուար 6ին շուրջ:

2. - Հայկական նահանջը եւ իր յատկութիւնները:

Սովորութիւն է ըսել. նահանջը պատճառ է որ հայ ամսաթիւերը յառաջանան:

Այս ասացումքին իմաստը կախուած է նահանջի տրուած իմաստէն եւ անոր դործադրութենէն:

Յուլեան տոմարի մէջ նահանջ կ'ըսուի այն տարեթիւը որ չորսով ճիշտ բաժանելի է, եւ որուն փետրուարը 29 օր կ'ունենայ. այս աւելցած օրը պատճառն է որ տարին երկու կիրակնօրեայ ունենայ. առաջինը՝ Յունուար եւ փետրուարի համար, երկրորդը՝ Մարտ 1էն մինչեւ Դեկտեմբեր 31ի համար: Պարզ տարիներուն՝ ամանորի առաջին օրը, է նաեւ ամսաթիւերի օրը. օրինակ՝ Հայոց Ա տարին չորեքշաբթիով կը սկսի եւ չորեքշաբթիով կը վերջանայ. Բ տարին՝ հինգշաբթիով. Գ տարին՝ ուրբաթով. Դ տարին՝ նահանջ ըլլալուն համար՝ կը սկսի չաբաթով, բայց կը վերջանայ կիրակիով. որովհետեւ տարին 1 օր աւելի ունի: Ասոնք են Յուլեան տոմարի նահանջ տարուան յայտնի նշանները:

Նահանջը՝ Հայոց Մեծ թուականի ընթացքին եւ հայ ամսանուններու տոմարագիտութեան մէջ, տարբեր իմաստ եւ յատկութիւններ ունէր:

Անանիա Շիրակացիի անունով մեզի հասած «Տիեզերագիտութիւն եւ տոմար» գրքին մէջ, հետեւեալ բացատրութիւնները կը տրուին. «Նահանջը ժամանակի շարժումին կարգը ճշտելու համար է... Դարձեալ նահանջը դադար կ'ըսուի, որ չորս տարիներէն ժողովելով՝ օր մը կ'ընէ, եւ այս օրը ոմանք տարիին վրայ կ'աւելցնեն (ամսաթիւ աւելցնելով): Բայց տարիին վրայ յաւելում չէ (այսինքն ամսուան վրայ թիւ չ'աւելցնել) որովհետեւ նահանջի օրը լուսնի ընթացքին մէջ չէ: Եւ լուսնի ընթացքին մէջ չ'ըլլալը անկէ յայտնի է, որ իւրաքանչիւր ազգի համար, հոն՝ ուր անոնք իրենց նահանջը կը գնեն, տարուան սկիզբը կամ կէսերուն, երկու օր իրարու ետեւ նոյն լուսնի կ'ըլ-

11. Շիրակացու մատենագրութիւնը, էջ 283 եւ 290:

12. ԱՆԱՆԻԱ ՇԻՐԱԿԱՅԻ, Տիեզերագիտութիւն եւ տոմար, Երեւան, 1940, էջ 66-68:

լայ¹³. Ինչպես մերինը Նաւասարդին¹⁴ եւ հոմայեցիներունը Մարտի մուտքին... Դարձեալ ոմանք կ'ըսեն թէ՛ երբ արեւը կը վերջացնէ իր 365 օրերը, լուսինը դեռ ամբողջացուցած է իր 354 օրուան շրջանը, եւ արեւը երեք ժամ կը քալէ նոր տարուան մէջ, մինչեւ որ լուսինը իր պարտքը հատուցանէ: Եւ այսպէս չորրորդ տարին, արեւը կը միացնէ իր յառաջացած երեք ժամերը՝ լոյս օրուան մը մէջ. բայց այս իմաստով չէ որ այդ օրը տարուան վրայ յաւելում կը նկատեն: ... Այլ որովհետեւ Անդրէաս փրկիստիան ուղած է ողիմպիականները յիշատակել. իրականին մէջ (նահանջը) զիտնալն է թէ ամսուան քանիւն է Յայտնութիւնը եւ (զարնան) զիշերահաւասարը. որոնց ամսաթիւերը նահանջով կը շարժին¹⁵:

Նոյն հեղինակը քիչ մը աւելի կը յըստակէ նահանջի ըմբռնումը, երբ կը պատասխանէ «Ինչո՞ւ կ'ըսեն թէ աւելիններուն մէջն է նահանջը» հարցումին: «Եկամուտ (այսինքն՝ նահանջի) օրը ո՛չ թէ Աւելեաց ամիսին մէջ կը դրուի, այլ զիշերահաւասարէն քսան օր առաջ. եւ աւելիններուն մէջ ըսուելուն պատճառը այն է՝ որ եկամուտ է ամիսին մէջ. սակայն երբ ամիսը անցնի, հետք չի թողուր (ամսաթիւ չ'աւելցնէր), որովհետեւ նահանջը շարժումն ունի կ'իյնայ եւ զայն կ'աւելցնէ, բայց ամսուան կարգը՝ թուականը կը մնայ նոյն. եւ ասոր համար կ'ըսենք՝ եկամուտ օրը աւելիններու մէջ»: Հի վրոյսին մէջ ալ, էջ 88՝ տարրեր բացատրութիւններով նոյն իմաստը կ'արտայայտէ: «Ասիկա (նահանջը) միայն

խօսք է, եւ ոչ թէ օր (այսինքն՝ նահանջ օրը յատուկ լուսնի փուլ չունենալով, ամսաթիւ չ'ունենար եւ խօսքի պէս կ'անցնի կ'երթայ) որովհետեւ ողիմպիականներուն յիշատակին համար դրուած է, քանի որ այս օրուան կը հանդիպէր այն հաւաքոյթը եւ կը սկսէր Մարտը, ինչպէս անունն ալ ցոյց կու տայ: Եւ առաջ կը տանի զիշերահաւասարի եւ եղանակներու թուականը¹⁶:

«Ինչո՞ւ զիշերահաւասարը միշտ Մարտի քսանին է» հարցումին կը պատասխանէ. «Ինչպէս պատահեցաւ թուականին սկիզբը, նոյնպէս կը մնայ անշարժ. ոչ միայն զիշերահաւասարը, այլ նաեւ միւս աղբիւրն տօները եւ եղանակները, բայց չ'ապացուցուեցաւ եւ եղանակներու թուականէն. որովհետեւ չորրորդ տարուան մէջ աւելցած օրը, հայերը շարժումն ունեցող աւելցուցին եւ իրենց համար առանձին նահանջ չ'իյնցին: Սակայն արուեստին հմուտները չ'ուզեցին չ'ապացուցել այս տարբերը եւ մեր աղբիւրն համար անշարժ տոմար հաստատեցին, ուրիշ աղբիւրն նման»¹⁷:

Տոմարի հեղինակին ըսածները ամփոփելով, Հայոց նահանջը հետեւեալ յատկութիւնները կ'ունենայ. 1) Նահանջը միայն շարժումն օր է, յատուկ ամսաթիւ չ'ունի. նշան մըն է՝ ժամանակի ընթացքը թուարկելու համար, ողիմպիականներու նման: 2) Նահանջը տարուան վրայ աւելցած օր է. սակայն, մինչ ուրիշ աղբիւրն տոմարին մէջ ամսուան օր կ'աւելցնէ եւ յատուկ ամսաթիւ ունի, ինչպէս Փետրուար 29ը, Հայոց քով ամ-

վերադիր չունի, լուսնի օրուան թիւ չունի. 28 Փետրուարի գ վերադիրն կը յաջորդէ Մարտ 1ի ք վերադիրը: 29 Փետրուարի վերադիրը շարունակութիւնն է 28 Փետրուարի գ վերադիրին:

14. Նահանջի օրը՝ Փետրուար 29ը՝ Նաւասարդի մէջ կու գայ Հայոց 532-648 թուականներուն: «Տիեզերագիտութիւն եւ տոմար» գիրքը այդ շրջանին դրուած ըլլալու է:

15. Տիեզերագիտութիւն եւ տոմար, էջ 66-68:

16. Անգ, էջ 73, գլ. 1է:

17. Անգ, էջ 89, գլ. 2բ:

13. Հին օրացոյցները, ամսաթիւին քով ունին ուրիշ թիւ մըն ալ, վերադիր անունին տակ. (տես Սարկաւազ Վ.ի խառնախօրանները. «Յովհաննէս իմաստասէրի մատենագրութիւնը», էջ 160-182: 2. Սարգստուր Վ. Սիւրմե-լեանի «Դասաւորութիւն վերադրացի տոմարագիրք» Տոմարագիտութիւն, Վ. Ե. Ն. Ե. Կ. 1818, էջ 55-62): Վերադիրները լուսնի օրերուն թիւերն են, եւ տարիէ տարի անոնցմէ մին կամ միւսը 11 յաւելումով՝ կ'ըսուի տարուան վերադիրը: Արդ, օրացոյցներու մէջ, նահանջի օրը՝ Փետրուար 29ը՝ իրեն յատուկ

սուան յատուկ օր չունի, եւ չի տարբերի պարզ տարիներէն. հետեւաբար «ոմիկը»¹⁸, տոմարագիտութենէ չ'հանկուտը, նահանջ օրուան ներկայութիւնը չի տեսներ: 3) Հայկական նահանջը տարիին վրայ օր կ'աւելցնէ՝ պահուելով ամսաթիւի եւ օթներեակի սովորական կարգին մէջ, հետեւաբար աչքէ կը վրիպի. «ոմիկը» կը խաբուի:

Այս առեղծուածային դէպքը հասկնալու համար, հաշուենք Յայտնութենէն մինչեւ զիշերահաւասարի օրերը, պարզ եւ նահանջ տարիներու ընթացքին: Օրինակի համար, առնենք Դ. Նահանջ եւ Ե. պարզ տարիները:

Շիրակացիի բոլորակին մէջ մեզի տրուած են հետեւեալ ամսաթիւերը.

Դ. տարի նահանջ			
Հայկական ամիսներով		Յուլեան ամիսներով	
Յայտնութիւն. Արաց 30		Յունուար 6	
Գիշերահաւասար. Ահեկան 14		Մարտ 20	
օրերու դումար			
Արացէն	1 օր	Յունուարէն	26 օր
Մեհեկանէն	30 »	Փետրուարէն	29 »
Արեգէն	30 »	Մարտէն	20 »
Ահեկանէն	14 »		
75 օր		75 օր	

Ե. տարի պարզ			
Հայկական		Յուլեան	
Մեհեկան 1		Յունուար 6	
Ահեկան 14		Մարտ 20	
օրերու դումար			
Մեհեկանէն	30 օր	Յունուարէն	26 օր
Արեգէն	30 »	Փետրուարէն	28 »
Ահեկանէն	14 »	Մարտէն	20 »
74 օր		74 օր	

Յուլեան ամսանուններով նահանջ տարիին նշանը յայտնի է. Փետրուարը 29 օր ունի, եւ կը տեսնուի թէ ինչո՞ւ նահանջ տարին՝ Յայտնութենէն զիշերահաւասար՝ 75 օր ունի:

Հայկական նահանջը ամսաթիւ չ'աւելցնէր եւ ծածկուած է ամսաթիւերու սովորական կարգին մէջ:

Ինչպէս Յուլեան նահանջ տարին, նոյնպէս նաեւ հայկականը 366 օր ունի, բայց չի տեսնուիր, որովհետեւ իր 366րդ օրը ամսաթիւի շարժումով կը ձեւանայ, եւ ոչ թէ յատուկ օրով:

Հայկական նահանջի այս յատկութիւնը յատակելու համար, առնենք Հայոց թրականի ԻԸ. Նահանջ տարին, հաշուենք

օրերը եւ տեսնենք ամսաթիւին ուստու՞մը: Շիրակացիին համաձայն՝ ԻԸ թուականի կազմը հետեւեալն է.

Տարին կը սկսի Մեհեկան 1ով, քանի որ Յայտնութիւնը Մեհեկան 6ին է. եւ կը վերջանայ յաջորդ Մեհեկան 1ով, քանի որ ԻԹ տարին կը սկսի Մեհեկան 2ով, եւ իբր Յայտնութեան թուական ունի Մեհեկան 7ը: Յուլեան եւ հայկական ամսաթիւերու զուգընթացութիւնը հետեւեալն է.

18. «Ռաբիկ» բառը «Տիեզերագիտութիւն եւ տոմար»-ի հեղինակն է որ կը դարձածէ, երբ կ'ըսէ. «Այս խորանք միայն են՝ յազապ եկամուտ ունին անծանօթ լինելոյ ի սամկաց» անգ, էջ 87:

Յունուար	31 օր	Մեհեկան 1-30 = 30 օր + Արեգ 1 օր	31 օր
Փետրուար	29 օր	Արեգ 2-30 =	29 օր
Մարտ	31 օր	Ահեկան 1-30 = 30 օր + Մարերի 1 օր	31 օր
Ապրիլ	30 օր	Մարերի 2-30 = 29 օր + Մարգաց 1 օր	30 օր
Մայիս	31 օր	Մարգաց 2-30 = 29 օր + Հրոտից 1-2 = 2 օր	31 օր
Յունիս	30 օր	Հրոտից 3-30 = 28 օր + Ասեկեաց 1-2 = 2 օր	30 օր
Յուլիս	31 օր	Ասեկեաց 3-5 = 3 օր + Նաւասարդ 1-28 = 28 օր	31 օր
Օգոստոս	31 օր	Նաւասարդ 29-30 = 2 օր + Հոռի 1-29 = 29	31 օր
Սեպտեմբեր	30 օր	Հոռի 30 = 1 օր + Սահմի 1-29 = 29 օր	30 օր
Հոկտեմբեր	31 օր	Սահմի 30 = 1 օր + Տրէ 1-30 = 30 օր	31 օր
Նոյեմբեր	30 օր	Քաղոց 1-30 =	30 օր
Դեկտեմբեր	31 օր	Արաց 1-30 = 30 օր + Մեհեկան 1 օր	31 օր
	366 օր		366 օր

Նահանջ տարուան 366րդ օրուան հա-
մար, Դեկտեմբեր 31ի դիմաց, հայկական
ամսաթիւ մնացած չըլլալով՝ կը դրուի
Մեհեկան 1ը, որ նախընթաց տարիներուն
(ԻԵ, ԻԶ, ԻԷ եւ ԻԸ) ամանորը եղած էր:
Իժ տարուան առաջին օրն ալ իր վրայ
կ'առնէ Մեհեկան 2ը. Յայտնութիւնն ալ,
որ Մեհեկան 6ին էր, այլեւս Մեհեկան
7ին կը կատարուի: Սկսելով ԻԺ տարիէն
մինչեւ ԼԲ, ամանորի ամսաթիւը յառա-
ջացում չ'ունենար, որովհետեւ ԻԺ, Լ,
ԼԱ տարիները 365 ամսաթիւ եւ օր ունե-
նալով, լրիւ դիրար կը բռնեն Հայկական
եւ Յուլեան տոմարները: ԼԲ տարին նա-
հանջ է, աւելի օր ունի՝ քան հայ ամսա-
թիւ. Մեհեկան 2ը որ տարուան առաջին
օրն էր, փոխանակ յաջորդ տարուան ԼԳ-ի
առաջին օրն ըլլալու, մէկ թիւ առաջ կ'ան-
ցնի եւ կը դառնայ ԼԲ նահանջ տարիին
վերջին օրը. իսկ ԼԳ-ի առաջին օրուան
կը հանդիպի Մեհեկան 3ը: Նահանջ տա-

րիներուն՝ հայ ամսաթիւերը եւ օրերը
երկու տարրեր իրականութիւններ կը
դառնան. օրերը 366 թիւ կը կազմեն, եւ
ամսաթիւերը՝ 365: Տարուան 60րդ օրը
(Յունուար 31 + Փետրուար 29), նահան-
ջի օրն է Յուլեան տոմարի մէջ, եւ ունի
իր յատուկ ամսաթիւը, Փետրուար 29,
որ եկամուտ է, ինչպէս եկամուտ է նա-
հանջ օրը. մինչդեռ հայկական տոմարին
մէջ նահանջի 60րդ եկամուտ օրը՝ որ տեղ
կը դրուէ Փետրուար 29ի դիմաց՝ ի-
րեն յատուկ եկամուտ ամսաթիւ չ'ունի.
ուստի այն ամսաթիւը՝ որ պարզ տարի-
ներուն Մարտ 1ի դիմաց կը դառնայ, կը
թողու Մարտ 1ի զուգընթացութիւնը եւ
կ'ըլլայ Փետրուար 29ի զուգընթացը. եւ
յաջորդաբար բոլոր հայ ամսաթիւերը կը
փոխեն իրենց նախորդ տարուան Յուլեան
զուգընթացը՝ մէկ օր յառաջանալով. բը-
նական կու դայ որ նահանջ տարուան
հայկական տոմարի վերջին օրը, 31 Դեկ-

տեմբերի դիմաց, հայ ամսաթիւ չ'ունե-
նայ. որովհետեւ 365րդը՝ վերջին ամսա-
թիւը կը զուգընթանայ 30 Դեկտեմբերին.
տարուան հայ ամսաթիւերը կը սպառին,
եւ յաջորդ տարիէն ամսաթիւ մը կ'անցնի
նահանջին, զուգընթանալու համար Դեկ-
տեմբեր 31ին:

Ամսաթիւերու յառաջացումը թէեւ կը
սկսէր Փետրուար 29ին, բայց հայկական
տոմարին մէջ զգալիօրէն տեսանելի կ'ըլ-
լար նահանջ տարուան զիշերահաւասա-
րին եւ յաջորդ պարզ տարուան Յայտնու-
թեան վրայ, որոնք ազգային քրիստոնէ-
ական տոմարին մէջ նկատուած էին հաս-
տատուն օրեր. որովհետեւ զիշերահա-
ւասարը կապուած է դարնան մուտքին,
հայկական յատուկ ամսաթիւ չ'ունէր¹⁹.
Իսկ Յայտնութիւնը անշարժօրէն Յուն-
ուար 6ին, եւ չ'ունէր յատուկ հայ ամսա-
թիւ: Ասոր համար է որ տոմարի հեղի-
նակը կ'ըսէ նահանջը իրականին մէջ ցոյց
կու տայ թէ ամսուան քանի՞ն է Յայտ-
նութիւնը եւ զիշերահաւասարը, որոնց
ամսաթիւերը նահանջով կը շարժին²⁰:

Հակառակ ընդհանուր կարծիքին եւ մե-
ղի հասած աւանդութեան, որուն կը հե-
տելի նաեւ Թումանեան, նահանջ տարին
Հայոց Մեծ եւ Փոքր թուականներու ըն-
թացքին, ոչ թէ իր 366րդ օրը՝ հայ ամսա-
նուններով պատրաստուած օրացոյցի նոր
տարիին կ'անցընէ, այլ Հայոց նոր տա-
րիին ամսաթիւն է որ կ'անցնի նահանջի
վերջին օրուան:

Հայկական նահանջի այս բացատրու-
թիւններէն կը հետեւի՝ որ յառաջացող
ամսաթիւերը չէին կրնար օրեր աւելցը-
նել, զանոնք զուգարեւ եւ ապա ամիս ու
տարի կազմել եւ փոխել հայկական ու
քրիստոնէական թուականներու սկզբնա-
կան զուգընթացութիւնը:

Հիշրայի տարեթիւին յառաջացումը՝
նկատմամբ մեր քրիստոնէական թուա-
կանին, բոլորովին տարբեր երեւոյթ է:
Արարական տարին լուսնային է, եւ 354-5
օր եւ ամսաթիւ ունի, ինք իր մէջ անշարժ
է. բայց որովհետեւ ամէն տարի, ըստ
պարագային, 10 կամ 11 օր կանուխ կը

սկսի նոր տարին քան մենք, կը պատահի
որ կանխումներու դումարը, միջին հաշ-
ուով՝ 32 տարին անգամ մը՝ տարեթիւ
աւելցնէ: Հիշրայի առաջին տարիէն, որ
կը զուգարդիպի մեր 622ին, մինչեւ 1966,
անցած են 1344 տարիներ, եւ արարական
տարին 42 տարի յառաջանալով հասած է
1386 թիւին:

Հայկական ամսաթիւերու կանոնաւոր
յառաջացումը, ազգային տոմարադիտու-
թեան մէջ, ցոյց կու տար նաեւ նահանջ
թուականներու կարգը. սկսելով Արաց
30էն կը հաշուէին մինչեւ այն թուակա-
նին Յայտնութիւնը, որուն քանիերորդ
նահանջի մէջ ըլլալը կ'ուղէին դիտնալ.
օրերու դումարը կը նոյնանար նահանջ-
ներու թիւին հետ: Օրինակ. եթէ ուղէին
դիտնալ թէ Մարերի ԺԴ-ն իրր Յայտնու-
թեան օր ունեցող չորս տարիները՝ Հա-
յոց թուականի քանի՞երորդ նահանջին
մէջն են, կը սկսէին հաշուել այսպէս. Ա-
րացէն 1 օր + Մեհեկան, Արեգ, Ահե-
կան՝ 90 օր + Մարերիէն 14 օր. զուգարն
է 105 օր. ըսել է թէ նահանջներու կարգը
105րդն էր, ձե:

Հայոց Մեծ եւ Փոքր թուականներէ
վերջ, այն տոմարադէտները՝ որ ունե-
րիստոսի թուական կը գործածէին, Հա-
յոց թուականը դառնելու համար կը դի-
մէին նահանջի կանոնին. «Թուականը
այսպէս դառնի, մէկ թիւ ա'ն Արաց ա-
միսէն եւ հաշուէ մինչեւ Յայտնութիւնը
(որուն թուականը կ'ուղեն դառնել), չոր-
սով բազմապատկէ, եւ ան է: Եւ տե'ս,
եթէ (նահանջէ ետք) առաջին տարուան
մէջ ես՝ երեք հանէ (զտած թուականէդ),
եթէ երկրորդին մէջն ես՝ երկու հանէ,
երրորդին՝ մէկ, չորրորդ տարուան մէջ՝
ամբողջ առ»²¹: Օրինակ. Քրիստոսի 651

19. Հայկական տոմարադիտութեան մէջ, եղանա-
կի կապուած հաստատուն օրերը Յուլեան ամ-
սաթիւերով կը յիշատակուին. «Տիեզերագի-
տութիւն եւ տոմար», էջ 88, 89:

20. Տիեզերագիտ. եւ տոմ. էջ 66-68:

21. «Թուական այսպէս արա' կալ թիւ ա. յԱրաց
ամսոյ եւ թուեա' մինչեւ ցՅայտնութիւն, չո-
րեքպատկեա' եւ այն է: Եւ տես, թէ ի նա-

տարիին Յայտնութիւնը, որուն Հայոց թուականը կը փնտռենք, Մեհեկան 24 է, օրը հինգշաբթի: Հաշուենք Արաց 30էն մինչեւ Մեհեկան 24. Կ'ունենանք 25 օր. բազմապատկենք չորսով՝ կ'ունենանք 100 թուականը: 651 տարին՝ նահանջ է ետք երրորդ պարզ տարին է. ուրեմն պէտք է 100էն մէկ թիւ պահանջենք եւ կ'ունենանք 99 թուականը: Ուրիշ բացատրութեամբ. Մեհեկան 24ը իբր Յայտնութեան ամսաթիւ ունեցող տարիները չորս են, որոնց վերջինը նահանջ է նախընթաց երեքը պարզ տարիներ են, եւ իրարմէ կը տարբերին շաբթուան օրերով (դչ. դչ. եչ. ուրբ.), որոնք կարգով իրարու կը յաջորդեն տարուէ տարի: Օրագրութիւն կանոնով, այսինքն՝ իբր մեկնակէտ առնելով 100 թուականի կիրակնօրեան, կը ճշտեմ

հանջի առաջին ամին եւ՝ դ ի բաց երթ, եւ թէ յերկրորդին բ., յերրորդին՝ ա., ի չորրորդ ամին լիով կալ: Ձեռ. թ. 672 (վենետիկ, Ս. Ղազար), Տոմար ԺԹ., թղ. 2ր:

22. Կիրակնօրեան կը դանուի Հայոց տարեթիւին 28ի վրայ բաժանումին մնացորդով: Օրինակ. 100:28=3 եւ մնացորդ 16: Այս 16 մնացորդին կը համապատասխանեն է Ա. դիրերը. որովհետեւ անոնք Հայոց ԺԶ տարին կիրակնօրեան են էին, եւ են նաեւ ճ թուականի, եւ այն

Յայտնութեան օրը²², ուրբաթ. իսկ այն Յայտնութիւնը, որուն թուականը կը փնտռէ՝ հինգշաբթի էր, ուրեմն, 100-1 = 99 է փնտռած թուականս:

Յարգ բացատրեցինք թէ ինչո՞ւ հայկական տոմարի կարգին անցած են Յուլեան ամսանունները, եւ թէ հայկական Մեծ եւ Փոքր թուականները նահանջ տարի ունենալով՝ անշարժ էին եւ չարժողը միայն Հայոց ամսաթիւն էր, առանց օրուան: Կարգն է որ անցնինք հայկական եւ քրիստոնէական թուականներու զուգընթացութեան կանոնին, ՇԼԲ զոյգ բոլորակներու լոյսին տակ, ուր կը պարտադրուին 1064 շարունակաւ տարիներու օրացոյցները:

(Շար. 1)

Հ. ԻԳՆԱՏԻՈՍ ԱԳԱՄԵԱՆ

թուականներուն՝ որոնց 28ով բաժանումը 16 մնացորդ կու տայ:

Կիրակնօրեայ դիրերը, Յունուարի մէջ, Հայոց Յուլեան օրացոյցի անփոփոխ կանոնին համաձայն, հետեւեալ կարգն ունին. Յունուար 1 = է, 2 = Զ, 3 = Ե, 4 = Դ, 5 = Գ, 6 = Բ, 7 = Ա (ՏԵ՛ս Սիւրսէլեան, Տոմարագիտութիւն, էջ 57): Արդ, 100 թուականի կիրակնօրեան է ըլլալուն համար, Յունուար 1ը կիրակի է, եւ Յունուար 6ը՝ ուրբաթ:

ՃՇՏՈՒՄՆԵՐ

ՄԻՆԱՍ ԱԹԵՅԻ ԱՄԹԵՅԻ ՄԱՍԻՆ

(ՆԻԻԹԵՐ՝ ԶՆԻՈՒՇԻ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ)

Մինաս Աթեցի, նախ Երուսաղէմի Հայոց աթոռակից Պատրիարք (1691-98), յետոյ՝ ընտրեալ Պատրիարք (1698-1704, ընդհատումով մը, դժբախտ պարագաներու ներքոյ)¹, միջին դարու հայ հոգեւորականութեան ամէնէն հետաքրքրական դէմքերէն մէկն է: Անոր մասին զբաղած են՝ ծանօթ պատմագէտ-բանասէրներ՝ Տիգրանեան Հ. Թ. Սարգսեանց, Մկրտիչ Եսայ. Աղաւունի, Արտուրդ Արք. Սիւրմէեան, Աստուածատուր Եսայ. Տէր Յովհաննիսեանց, Մեսրոպ Եսայ. Նշանեան, Հ. Գ. Գալէմբեարեան, Փրոֆ. Հրաչեայ Աճառեան, Լէօ, Հ. Ն. Ակիւնեան եւ Ա. Ալոյզյանեան:

Մեր նիւթէն զուրս ըլլալով անդրադարձումը վերոյիշեալ հեղինակներէն շատերուն գրութեանց, քանի որ անոնք չօչափած չեն Աթեցիի Զնքուշի մէջ անցուցած կեանքն ընդհանրապէս եւ Զնքուշի անոր առաջնորդութիւնը մասնաւորապէս, այս յօդուածով պիտի մատնանշենք միայն վերջին երկուքին՝ Հ. Ն. Ակիւնեանի եւ Ա. Ալոյզյանեանի գրութեանց Զնքուշի վերաբերեալ մասերուն յայտնի սխալները:

Ինչպէս իր անունը կը բացայայտէ, Մինաս վարդապետ՝ Աթեցի (Տիգրանակերտցի) էր: Սակայն Զնքուշի վանքի պատմագիր Տէր Մովսէսէն եւ նոյնինքն Մինաս Աթեցիէն ստորեւ մեր կատարելիք մէջըրբումները ցոյց կու տան՝ թէ Մինաս Աթեցի ի մանկութենէ բերումը էր Զնքուշ, որդեգրուած Զնքուշի մը

կողմէ, մեծցած ու կրթուած էր Զնքուշի Սիրահայեաց Ս. Աստուածածին վանքի եւ Ս. Կարապետ եկեղեցւոյ հովանիին ներքեւ, եղած էր առաջնորդ-վանահայր Զնքուշի եւ իր անձին վրայ պահած էր այդ տիպոսը՝ նոյնիսկ Երուսաղէմի իր պատրիարքութեան տարիներուն...:

Ամէնէն առաջ կարգանք մեր վանքի արժանահատ պատմիչ Տ. Մովսէսի սողերը. (Թորոս Աղբար, Բ. Էն այս և հետագայ մեր մէջքերումները կը կատարենք գրաբարը աշխարհաբարի վերածելով):

«ՌձԻԸ (1679) քուականին Մարկոս վարդապետը վախճանեցաւ եւ այդ քուականին (վանահայր-Առաջնորդի) արքունի յաջորդեց իր ձեռնասուն աշակերտը՝ Յամբեցի Մինաս վարդապետը, որ մանկութեան ժամանակ բերումը էր եւ որդեգիր տրուած ուն Շէմսուզի հաշատուրի, որ եւ մտ, իր համեստ բնաւորութեան համաձայն, կրքուեցաւ եւ սորվեցաւ իր ուսուցչին՝ Մարկոս քաջ եպիսկոպոսին փոխ, եւ յետոյ ժառանգեց իր (հոգեւոր) հօր արքունի, եւ յետոյ երթալով Ս. Էջմիածին, 24 տարի նուիրակութեամբ շրջապաշտեցաւ, եւ յետոյ ժառանգեց Կոստանդուպոլսոյ եւ Երուսաղէմի պատրիարքական արքունի: Այն ատեն Ս. Երուսաղէմ տանելով իր եղբորորդին (սա՛ղիմ որդեգրող հաշատուրի քոռն է)

1. Զնքուշ ծանրանար այս կէտերուն վրայ, մեր նիւթէն զուրս ըլլալով: